

**“ԵՐԱՆԻ՝ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ  
ԱՌԱՆՑ ԶԻՍ ՏԵՍՆԵԼՈՒ ԿԸ ՀԱԻԱՏԱՆ”**

- 1. ԱՆՀԱՒԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱԻ**
- 2. ՀԱԻԱՎՏՔ, ԹԷ ՀԱԻԱՏԱԼ**
- 3. ՀԱԻԱՏԱԼ ՈՒ ՍԻՐԵԼ**
- 4. ՀԱԻԱՏԱԼ Ե՛Ւ ՏԱՌԱՊԻԼ**
- 5. ԻՆՉՈ՛Ւ ՀԱԻԱՏԱԼ ՅԻՍՈՒՍԻ**
- 6. ԻՆՉՈ՛Ւ ՀԱԻԱ-ՏԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ**

**BLESSED ARE THE PEOPLE WHO HAVE  
NEVER SEEN ME AND YET BELIEVE**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ  
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
2001**

# “ԵՐԱՆԻ՝ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ ԱՌԱՆՅ ԶԻՍ ՏԵՍՆԵԼՈՒ ԿԸ ՀԱՒԱՏԱՆ՝”

«Ի՞նչ է հաւատքը: Հաւատք՝ կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն՝ որոնց կը յուսանք, և համոզուած ըլլալ այն բաներուն՝ որոնք չեն երեւիր: Արդ, այսպիսի հաւատքով մըն էր, որ նախնի ժամանակներու մարդիկ Աստուծոյ կողմէ ընդունուեցան: Հաւատքով է որ կը հասկնանք տիեզերքին ստեղծումը Աստուծոյ խօսքով, որով տեսանելի այս տիեզերքը ոչինչէն գոյացաւ»--Եբր- ԺԱ.1-3:

Ազգութենէ, լեզուէ և ցեղային պատկանելիութենէ գերիվեր և հասարակային է աներկեան հաւատքը, որ յայտնուեցաւ Մարդեղեալ Զրիստոսով: Հաւատք, յոյս և սէր բառերն են, որոնք մարդուն կեանքին ինքնութիւն և նպատակ կու տան, այլապէս մարդուն կեանքը կը պարպուի իր իմաստէն: Վերոյիջեալ բառերը ունին աստուածատուր ձգտում, տենչ և լոյսի գիտութիւն բնական ու մարմնական ջրջապատէն անդին դէպի անհունն ու գերբնականը: «Բառերը կարելոր չեն, այլ ապրող ու ջնջող հաւատքը, նման է այն գոյգերուն՝ որոնք կ'ապրին միասին ու կը սիրեն զիրար, և յաճախ խօսիլը կը նկատեն անկարելոր. որովհետեւ նայուածք մը, ժպիտ մը և ձեռքի սեղմում մը աւելի ջատ բան կ'ըսեն քան որեւէ խօսք»--Լուերհան Արքեպիսկոպոս:

Կանոնն ու օրինական կապերը ապարդիւն են հոն, ուր հաւատքն է որ պէտք է խօսի, գործօ՛ն հաւատքը, ո՛չ սրտաջարք ձեւերը, ո՛չ ջրթներու վրայ թրթուացող բանաձեւերը նման հեթանոսներու, և ո՛չ ալ Արեւելեան միաստիք արտայայտութիւնները, այլ խոր և **ապրուած** հաւատքը: Հաւատքը զօրութեան մը ներշնչումն է:

## ԱՆՀԱՒԱՏԱԼԻ, ԲԱՅՅ ԻՐԱԻ

Ազխարհի մէջ ջատ են անհաւատալի դէպքեր և իրողութիւններ, որոնք թէեւ ոչ ճշմարիտ, սուտ, կեղծ և խաբուսիկ ըլլալ կը թուին բայց կրնան իրաւ ըլլալ:

Ի՞նչ կը նշանակէ "իրաւ" բառը: Ըստ Հր. Աճառեանի՝ "իրաւ" բառը կը նշանակէ հաւաստի, ապահով, վստահելի և արժանահաւատ: Նոյն բառին իմաստէն կը ծորի՝ "իրաւունք, դատաստան և արդարութիւն" նշանակութիւնները: "Իրաւ" բառին ածանցումներն են՝ *իրաւացի, իրաւ արար* և *իրաւագիտութիւն*:

Գեղեցիկի և բարոյականի ձեւազեղծումը, որքան ալ իրաւ-

բանական զգեստաւորումով ներկայացուի, դարձեալ թէ՛ սուտ է և թէ վնասակար: Այսօր մարդկութիւնը կ'ապրի սուտի և կեղծիքի աշխարհակալութեան ներքեւ, թէ՛ քաղաքական և թէ տնտեսական կերպով:

Անհաւատալին և իրաւը այն արտակարգ դրութիւններն են, որ մարդկութիւնը իր ահաւոր սուտերով դեռ կը փորձէ ապրիլ: Ներկայ անիրաւ դրութեան գոյատեւումը առանց պատիժի, Աստուածային երկայնամտութեան և ողորմութեան միայն կարելի է վերագրել այս գլխութիւնը:

Աստուած անհաւատալիօրէն ողորմած է: Մեզի՛ (մարդկութեան) համար անհաւատալի է Անոր ողորմածութիւնը, որովհետեւ մարդկութիւնը օրէնք և իրաւունք կը փնտռէ *ի նպատակ* իրե՛ն: Մարդիկ արդարութիւն և իրաւունք կը պահանջեն, միայն *իրե՛նց* հաշւոյն կամ ջահուն համար:

Մարդիկ, տակաւին իրենց դրացիին մէջ իսկ չեն կրցած տեսնել զԱստուած և ո՛չ ալ իրենք իրենց մէջ: Արդի մարդկային ընկերութեան տագնապը, ոչ թէ միայն աւելի՛ն *աւ նժնայո՛ւ* տեսչն է, այլ իսկական մարդկային ընկերութեան տագնապը չկարենա՛լ *տեսնել* է իր ինքնութիւնն ու պատկանելիութիւնը:

Մարդկութիւնը՝ իր արդի մեքենական ոսկեդարուն մէջ, կ'ապրի տագնապալի ամենէն խռովալի և անձկալի օրերու դարն փորձառութիւնը:

Ինչո՞ւ:

**Որովհետեւ ան չէ ապրած Յիսուս Զրիստոսի Գեթսեմանիի ահասարսուռ տագնապը:**

Դիցազնաջունչ հերոսները փնտռելու չէ՛ մեքենազէն պատերազմներու պատնէջներու ետին: Հերոսկան մաքառումի փառապանծ դէպքերը իրագործուած են զրկանքի, վիշտի և հալածանքի և մենակեցութեան մէջ: Ապացո՞յց՝ Վարդանանց ինքնապաշտպանութիւնը:

Անհաւատալի է, բայց իրաւ, որ պարսիկ արքայական պահլաւ մը կարենայ սիրել իր հօր սպաննիչին որդին, և նուիրէ ինքզինք ծառայելու անոր: Անհաւատալի է, բայց իրաւ, որ պետական դաւաճան մը բանտարկուի 13 երկար տարիներ, և յետոյ ներելով զինք տառապեցնող թագաւորը, բժշկէ անոր հիւանդութիւնը և Զրիստոնէական լուսազարդով ողողէ հայոց արեւունիքը և համայն ազգը:

Անհաւատալի է, բայց իրաւ, որ Արտաշէսի և Մեծն Տիգրանի զինեալ բանակները չի կարողացան միաձուլել հայը, որքան միաձուլեց Ա. Գրիգոր Լուսաւորիչ՝ Յիսուսի *սկիւռ*, իր պատգամներովը, ու ի ծառայասիրական նուիրումով և աղօթներով:

Անհաւատալի է, բայց իրաւ, որ հեղինական և հումէական սպառազէն բանակներու սուրն ու պետական աստուածները ջախջախուեցան ու խոնարհեցան Յիսուս Քրիստոսի առաքեալներու նահատակութեան և անվեհեր հաւատփին առջեւ:

Աներեւակայելի է, բայց իրաւ, որ պարզ և անուս Գալիլեացի տասնեակ մը ձկնորսներ փոխակերպեցին Հոմէական կայսրութեան կրօնական հաւատքը, անոնց գաղափարական ըմբռնումը և Արարատեան աշխարհի մէջ դարձան հիմնադիրները Յիսուսի եկեղեցիին:

Անհաւատալի է, բայց իրաւ, որ Վարդանանց Ճակատամարտը, Աւարայրի դաշտին վրայ, թէեւ վերջացաւ պարտութեամբ և Վարդանի մահով, բայց ան դարձաւ, իր *ճիտական* արտաքին ձեւին մէջ *դրաշխան*, հզօրագոյն իմթանը ազգային ապագայ խոյանքներու: Ձկայ հայ ժողովուրդը առանց Վարդանանց և Ղեւոնդեանց յիշատակին: Անհաւատալի է, բայց իրաւ, որ Վարդանանց ճակատամարտին արդիւնքը եղաւ այն, որ հայոց կրօնքը, լեզուն, ազգային մշակոյթը ի սպառ ազատեցան Արեւելիի ոսնձգութիւններէն: Վարդանանցը դարձաւ հայոց կեանքին մշտնջենաւոր պատմութիւնը:

Անհաւատալի է, բայց իրաւ, որ ջախջախուած ու փշրուած և Տէր էլ Զօրի մահաբոյր ուրուականէն պրծած հայ բեկորներ արթնացան իրենց մահաթմբիքէն և ծլարձակուեցան անմեռ գաղափարի և անջէջ հուրի հաւատքով գոյատեւման ու յարատեւման ի ինդիր:

Անապատէն եկող աստուածաբարբառ մարգարէներու նման, հայաջինջ սարսափէն ճողոպրած հայ իլեակներն ալ ունեցան տեսիլք և լինելիութեան կամք: Տէր Զօրի անապատը փոխանակ դառնալու հայ ազգին գերեզմանը, ան դարձաւ լոյսի, յոյսի և նուիրումի ջօջափելի զանգակատունը՝ ուղեցոյց կեանքի և ներջնջարա՞ն վերակենդանացման:

Տէր Զօրի մոխիրներէն ծնունդ առաւ Անթիլիասի հոգեջունջ ճեմարանը իր հոգեջնորհ կղերականներով և սրբազան գրականութեամբ: Տէր էլ Զօր վիժում մը չէր հայ ազգին համար, այլ ծնունդը բաջահաւատներու, որոնք անձնուիրաբար կարուցին միաբանութիւնը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցին, վեհարանը ու կանգնեցուցին Մեծ Եղեռնի նահատակներու յուշարձանը (Ս. Ստեփանոս Մատուր):

Անհաւատալի է բայց իրաւ, որ չիւլլեական դարն ալ՝ իր մեքենագիտական ու ելեկտրագիտական ոսկերչարով նորելուկ և անըմբռնելի վտանգ մըն է: Այս նորելուկ սպառնացող աղէտը՝ խայթոցաւոր է: Ենթական խայթուելէն յետոյ միայն կ'անդրադառնայ վերքին անաւորութեան: Այս արկածալից և մահացու չարիքները կու գան զանազան զգեստաւորումներով՝ հաճոյամոլութիւն,

գեիութիւն, փառամոլութիւն, ազահութիւն և դրամապաշտութիւն: Մերօրեայ սովետութիւնը կը տարփողէ ինչ որ *մարմնական* է և *զգացական*: Ինչ որ դիւրակեցութեամբ է և անփութութեամբ:

Այժմեայ ժողովուրդներու մտայնութիւնը անբացատրելի կերպով անհաղորդ է դասական և տիպար կենցաղավարութեան: Նոյնիսկ գեղարուեստը՝ իր երաժշտական ու նկարչական բարձր ու ազնուագոյն երեւոյթին տակ սնանկ է ու պակասած իսկական արժեքներէն: Կենդանիներն են որ կը փնտռեն միայն *կենցաղային* և *ցանկութիւն*: Իսկ մարդը կը տենչայ մտքի և սրտի գեղեցկութեան, արդարութեան և ճշմարտութեան: Զրիստոնէական հաւատքը՝ արուեստի բոլոր մարգերուն մէջ, է՝ բանաստեղծութիւն, ֆանդակագործութիւն, իմաստասիրութիւն կամ նկարչութիւն, գրականութիւն կամ գեղարուեստ: Եկեղեցին կանգնած է, որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժեքները՝ **սէր, նուիրում և սրբութիւն**:

Մենք կ'ողջունենք հայ փշրուած բեկորները, որոնք ախորի աւերուածութեան մէջէն վերակենդանացան նման փիւնիկի և կառուցին նախ եկեղեցի և դպրոց ու *յետո՛յ* իրենց բնակութեան տուները: Հաւատքի ա՛յս նուիրեալները, ինչ անուն և պիտակ ալ ունեցած ըլլան, կը պատկանին համընդհանուր հայութեան:

Անհաւատալի է կարգ մը անհաւատ գիտնականներու և մտաւորական ճանչցուածներու սնտփառութիւնը, սակայն ճշմարտութիւն է և իրաւ, որ չորրորդ դարէն սկսեալ, Հայ մարդու գիտակցական և ենթագիտակցական վիճակը կազմող մեծագոյն ազդակը կազմած է իր հաւատքը՝ **Քրիստոնէութիւնը**:

Փարատե՛նք կասկածի ստուերները, նահանջի՛ մատնենք անորոշութեան ջուհերը ու կառչած մնալով մեր հաւատքին, դիմենք դէպի կեանք, դէպի աշխատանք, դէպի լոյս առաւօտ՝ երանական լոյսին տեսութեան, **հաւատով և լաւատեսութեամբ**:

**Օգոս. 31, 1998**

**Թորոնթօ**

## ՀԱՒԱՎՈՒՄ, ԹԷ ՀԱՒԱՏԱԼ

Յովհաննու Աւետարանի գրութիւններու յատկանշական համարներէն մին, հետեւեալն է.

*«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Տղային տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաիտենական կեանքը»--Յով. 4.16:*

Առաքեալը վերոյիշեալ համարէն յետոյ կը շարունակէ ու կ'ըսէ իր ընթերցող հաւատացեալներուն. *«Ով որ կը հաւատայ անոր՝ (Յիսուսի) չի՛ դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է»--Յով. 4.18:*

Վերոյիշեալ համարը, մարդ էակին դատապարտութիւնը՝ Ադամին մեղքին չի՛ վերագրեր, այլ ենթակայի՛ն անհաւատութեանը, որովհետեւ մարդ սկիզբէն անմահ չէր ստեղծուած: Հաւատալ խորհուրդի մը տիրացումն է որուն ստուգութեան փորձանիշը ինքն իր մէջն է: Ստուգութեան անդիմադրելի զգացումն է որ խանդավառ կը դարձնէ բրիստոնեան: Աստուծոյ չհաւատացող հոգին կրնայ ըսուիլ թէ գոյութիւն իսկ չէ առած դեր:

1. Ան կը նմանի ներարգանդեան վիճակի մէջ գտնուող մանկիկի մը:
2. Ինչպէս որ չծնած մանկիկը արգանդին մէջ անհասկնալի, շփոթ ու խաւար գոյութիւն մը ունի և ինքնութիւնը չէ ստացած, այնպէս է և անհաւատ հոգին:
3. Ուստի, հոգի մը երբ անհաւատ մեռնի, կրնայ ըսուիլ թէ վիժեցաւ, այսինքն չծնած մեռաւ:

Հաւատալու զօրութիւնը ո՛չ թէ հաւատի՛ն մէջն է, այլ չհաւատալու՝ ազատութիւնը ունենալով հանդերձ, հաւատալու՛ն մէջն է: Աներկեան և աներկիւղ հաւատալը ազգութենէ, լեզուէ և ցեղային պատկանելիութենէ գերիվեր և հասարակային է, որ յայտնուեցաւ Քրիստոսի Մարդեղութեամբ: Հաւատալը զօրութեան մը ներշնչումն է՝ ո՛չ միայն բնական գիտութիւն մը: Նախաբրիստոնէական դարաշրջանին հանճարի հիմնական գիծը ոգեշնչում կամ աստուածային ներշնչանք կը համարուէր: Մտածողութեան հիմնական խարխիսն ու ներշնչարանը կը կազմէ Յիսուսի Մարդեղութեան միսթիքը և Սուրբ Հոգւոյն հեղումը Պենտեկոստէին:

*«Հոգեկան իրերու մէջ կոչումն է որ կ'առաջնորդէ և ջնորմէն է որ կը զարգացնէ: Կանոնն ու օրինական կապերը ապարդիւն են*

հուն, ուր հաւատքը պէտք է որ խօսի, գործօն ու փորձառակա՛ն հաւատքը, ո՛չ սրտաջարժ ձեւերը, ո՛չ ջրթներու վրայ թրթռացող բանաձեւերը, ո՛չ մեքենական և միաստի՛ արտայայտութիւնները, այլ խոր ապրուած հաւատքը, որուն համար մարդ Բաջութիւն կը գգայ իր մէջ հազար անգամ մեռնելու»--Մեսրոպ Վրդ. Նարոյեան 1875-1944: Հաւատքը պատմական փորձառութիւն մը չէ միայն, այլ հանապազօրեայ ապրում մը դառնալու է, որ կը կարօտի սերտողութեան ու վերանորոգման:

Փիլիպպոս սարկաւազ հարցուց Եթովպիոյ Կանդակա թագուհիի գանձապահ ներքինիին, ըսելով. «Եթէ ամբողջ սրտովդ կը հաւատաս (այսինքն, եթէ ունիս համոզում, ուրախութեամբ կը վստահիս թէ Յիսուս Մեսիան է, ու կ'ընդունիս թէ Ան Բու Փրկիչդ է, ու կը հաւատա՛ս Աստուծոյ Թագաւորութեան, ու ամբողջութեամբ կը հնազանդիս Իր պատուիրաններուն) թէ Ան Որդի Աստուծոյ է»: Ներքինիին պատասխանեց, ըսելով.

**«Կը հաւատամ թէ Յիսուս Զրիստոս Աստուծոյ Որդին է»:**

Հաւատալ Աստուծոյ, վստահիլ և ենթարկուիլ է Անոր Խօսքին: Հաւատալ ինչի՞, ոչ թէ Հաւատոյ Հանգանակի մը, այլ Յիսուսի Աւետարանին: Այն ինչ որ կ'երեւի, այլեւ կարի՛ չունի որ մարդիկ հաւատան: Կը հաւատանք Աստուծոյ որովհետեւ միտքով անըմբռնելի է Ան Իր համբերութեամբ, սիրով, անձնանուիրումի և իր Որդւոյն սրբարար խաչելութեամբ յայտնուեցաւ մարդկութեան:

Մարմնեղէնը չի հասկնար հոգեւորը, այդ իսկ պատճառաւ, Աստուած հաւատալու դուռը բացաւ մարդ արարածի փրկութեան: Վերլուծութեան և «բանականութեան» օրէնքներու չենթարկուող ամենամեծ երեւոյթներէն մէկը **հաւատալն** է, հաւատալ Աստուծոյ գոյութեան և Անոր Հայրութեան: Զրիստոնեայի մը դերը՝ հաւատալ, տառապիլ և սպասել է: Հաւատալ Յիսուս Զրիստոսի, կը նշանակէ, ոչ թէ հաւատալ Անոր **պատմական** դէպք իրողութեան միայն, այլ կատարել Անոր իւրաքանչիւր պատուերը:

1. Վստահիլ Անոր զօրութեան և կարողութեան:
2. Վստահիլ Անոր իմաստութեան և նախատեսութեան:
3. Վստահիլ Անոր խոստումին, հոգ չէ որ մենք տառապանքի բովէն պիտի անցնինք:

Յիսուս Զրիստոսի Հաւատալ ու զԱյն սիրել այն գոյգ ճառագայթարձակ ջողերն են, որոնք կը սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն Անտեսանելին: "Հաւատալ" կը նշանակէ՝ հաւանիլ կամենալ, վստահիլ և ընդունիլ Աստուծոյ իջխանութիւնը: Ապաւինիլ Աստուծոյ նախաինամութեան.-

*«Աստի կ'ըսեմ ձեզի. ձեր կեանքին հաւար հոգ մի՛ ընե՛ք թէ ի՛նչ պիտի ուտե՛ք կամ ի՛նչ պիտի խմե՛ք, և ոչ ալ՝ ձեր մարմնին հաւար, թէ ի՛նչ պիտի հագնի՛ք. չէ՞ որ կեանքը աւելի կ'արժէ քան կերակուրը, և մարմնը աւելի՝ քան զգետուրը: Եւ այնքէ՛ք երկնքի թոյնը ննդու ն, որոնք ո՛չ վարուցան կ'ընեն, ո՛չ կը հնձեն և ո՛չ ալ ջտեմարաններու մէջ կ'ամբարեն, քայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք աւելի է՛ք անոնցէ»* --Յիսուս

Քրիստոս (Մատթ. 2.25-34 կարդալ մնացեալ հատուածը և Ղուկ. ԺԲ.22-31): «Արդարեւ, Աստուծոյ մօտեցողը պէտք է հաւատայ՝ թէ Ան գոյութիւն ունի և կը վարձատրէ անոնք որ Ձինք կը փնտռեն»--Եբր. ԺԱ.6: Կը տեսնե՞ք այս կամուրջը: Ի՞նչ կ'ըսե՛ք եթէ յայտարարեմ՝ թէ ինք իրեն բուսաւ. եթէ կամուրջ մը ունի իր ճարտարապետը, երկինքն ու երկիրը, աստղերն ու մարդկութիւնը եւս ունին իրենց Արարիչը: Աստուած ալ ճանաչելի է ո՛չ թէ զգայարաններով, այլ հոգիի՛ աչքերով:

Հաւատալը կը նշանակէ նոյնանալ թէ հաւատացածին (Աստուծոյ) և թէ բոլոր հաւատացեալներուն հետ. որոնք կը հաւատան քո հաւատացածիդ՝ Աստուծոյ: Եթէ կը հաւատանք Աստուծոյ, պարտական ենք վստահիլ նաեւ անո՛նց որոնք կը հաւատան: Հաւատալը՝ հաւատն է Անհաւատալիին, ջերմօրէն ու խանդավառօրէն: Յովհաննու Աւետարանին մէջ առաքեալը կը շեշտէ "հաւատալ"ը աւելի քան "հաւատ"ը:

***Հաւատքը կրնայ միայն "գիտութիւն" մը ըլլալ, իսկ "հաւատալը" գործօն արարաբ:***

Առաքեալներու վկայութիւնը հաւատալի դարձաւ, որովհետեւ իրե՛նք կը հաւատային:

Յիսուս Քրիստոսի հաւատալը, ճշմարտութիւններու կամ վարդապետութիւններու ցանկ մը կամ Հանգանակ մը չէ՛, այլ **Քրիստո՛ս է:** Իւրաքանչիւր հաւատալիք, *առանց Աւետարանի* վկայութեան, իրեն անթափանցելի գաղտնիքներովը կամ խորհուրդներովը, մարդկային իմացականութեան համար մտաւորական ծանրութիւն և աւելորդապաշտութիւն մըն է:

Հաւատալու համար միայն մարդկային միտքը չի բաւեր, այլ հոգեկան տեսութիւնն ալ հարկաւոր է: Մեզմէ ջատեր քրիստոնեայ են առանց Քրիստոսի հաւատալու: Եկեղեցական ծէսերը կ'ընեն առանց այդ խորհուրդները ապրելու: Ժամ կ'երթան առանց երեսնին խաչակնելու: Հաւատալու առաջին նշանը **աղօթելն է:** Անշուշտ թէ հաւատի կարիքը կայ թէ Աստուած կայ. նոյնպէս ալ չհաւատալու պէտքը կայ, թէ Ան գոյ չէ: Առաջինը դրական հաւատն է իսկ երկրորդը ժխտական:

Առաջին դարու ֆրիստոնեաները կ'ապրէին Յիսուսի լոյսով,  
և իրենց կեանքին օրինակը վարակիչ դարձաւ: Խօսքէ և դաւա-  
նանքէ աւելի, ֆրիստոնեութիւնը եղաւ **ապրուած իրականութիւնը**  
և ոչ միայն դաւանանքն ու հաւատամբը: Անոնց կեանքը համակ  
եղաւ ծառայութիւն և նուիրում: Առաքելական եկեղեցին կենսու-  
նակ աճում մըն էր հեղուկ և ջերմեռանդ ազատ և անկախ: Կարիք  
չունէր հաւատամբի կամ կանոնագրութեան, մինչեւ օտարամուտ և  
հեթանոս վարդապետութիւնները:

**Ապրիլ 10, 1999**

**Թորոնթօ**

## ՄԱՀԷՆ ԿԵԱՆՔ

Երբ խաւարէն եկայ լոյսին,  
Յիսուս եղաւ նո՛ր կեանքս իրաւ:  
«Ժազը մեռա՛ւ», ափսոսացին,  
«Մե՛ղք իր գրչին, կորսուեցա՛ւ»:

Ճի՛շդ կ'ըսէին, թէ ես մեռայ,  
Երբ Ձայն գտայ: Ի՞նչ գիտնային,  
Թէ՛ զերդ դիակ մը անզգայ՝  
Մեռայ եսի՛ս ու Աշխարհի՛ն:

Մեռայ ծափին թէ ապտակին,  
Մարդոց լեզուին մեղքը թէ թոյն,  
Ինչքի կիրքին, անուան փառքին,  
Մեղքի դիւթիչ գինիներուն:

Երբ ես մեռայ, ի՞նչ գիտնային՝  
Նո՛ր սկսայ ապրիլ միայն,  
Ծնէր էի ես Յիսուսին:  
--Անոնց մաղթեմ թող մա՛հ նման,

Որ խաւարէն յառնեն Լոյսին...

--ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

## ՀԱՒԱՏԱԼ ՈՒ ՍԻՐԵԼ

Քրիստոնեական հաւատքի ամբողջանուէր Բարոզիչ Պօղոս արաբեալ աւելի բարձր կը դասէ զԱստուած *սիրելի* Բան անոր *հաւատալը*։ Յարութեան գաղափարին (հաւատքին) և իրողութեան մեծագոյն և հզօրաշեշտ ախոյեանը հանդիսացած է Պօղոս արաբեալ։ Անյաղթ հաւատքի փորձառու՝ Պօղոս կ'ըսէ.

***«Եթէ ու նենամ ամբողջ հաւատքը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չուենեամ՝ ոչինչ են»***

Ա. Կորնթ. ԺԳ. 2:

Յոյս ու միաժամանակ խրախոյս Քրիստոս՝ Իր արաբելութեան շրջանին ըսաւ. ***«Այլ որ ինծի կը հաւատայ, ոչ թէ ինծի հաւատացած կ'ըլլայ, այլ Անոր որ զիս դրկեց»*** --Յով. ԺԲ. 44: ***«Թող ձեր սրտերը չխռովին, հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաև ինծի»*** --Յով. ԺԴ. 1:

Կեանք բաշխող Քրիստոս ըսաւ. ***«Այլ որ ինծի հաւատայ՝ երբեք պիտի չծարախ...Այս է Հօրս կամբը, ով որ տեսնէ Որդին և հաւատայ Անոր՝ յախտենալան կեանք ունի, և ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր»***: ***«Այլ որ կը հաւատայ՝ կ'ուենայ յախտենալան կեանք»*** --Յով. Զ. 35, 40, 47:

Հաւատալ Յիսուս Քրիստոսի կը նշանակէ վստահիլ ու ծառայել՝ Անոր գործօն ջարքի մէջ և գործադրել անոր պատուիրանները ո՛չ թէ ակամայ, այլ Անոր *սիրոյն* համար։ Օրինակ.

Սերն է որ կ'ընդգրկէ և կը համակէ մարդկային հոգին և եութիւնը, ու երբ անձը մեռնի աշխարհի կամ նահատակուի, անոր սիրոյ հոգին պիտի գոյատեւէ։ Հաւատք, յոյս, սէր և Բաջութիւն՝ քրիստոնեայի մը բնորոշող արաբիւնութիւններն են ու ինքնաշատուկ և անկապտելի գօրութիւնները։ Հօր Աստուծոյ սէրը հանդէպ իր Որդոյն՝ պատուանդանն է տիեզերքին ու երաջիւիքը մարդոց փրկութեան։ Սէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ, գոհողութիւնը կը դիւցազնանայ իսկ սէրը կը յաւերժանայ։ «Սերն ու վիշտը, հաւատքն ու փորձութիւնը կը կազմեն արարչական նախանիւթը և էասարրը ծնուցիչ»:

Ինչո՞ւ նախ սէրը:

Մարդկայնօրէն կարելի է հաւատալ բազմաթիւ մարդոց ու զանազան ձեռնարկներու, և սակայն չսիրել ու չնուիրուիլ անոնց:

Իսկ երբ սիրես անձ մը կամ փոքրիկ արարիչ մը այլեւս այդ անձին չպատահիլու և այդ արարիչը չիրագործել անկարելի կը դառնայ: Այս աներկբայելի՝ իրողութեան համար, մեր Տէրը՝ Բրիստոս Իր յարթական յարութենէն յետոյ երբ հանդիպում ունեցաւ Պետրոս աջակերտին Գալիլիոյ ծովափը, անոր ուղղեց սրտառուչ սա հարցումը.

*«Արձո՞ն, Յովնանի՛ որդի, կը սիրե՞ս զիս ատենցմէ աւելի.*

*Այո՛, Տէ՛ր, պատասխանեց ան, որ և զիտես որ կը սիրեմ՝ քեզ:*

*Արածէ՛ իմ գառնակներս, ըսաւ Յիսուս անոր: Եւ դարձեալ հարցուց.*

*Արձո՞ն, Յովնանի՛ որդի, կը սիրե՞ս զիս: Այո՛ տէ՛ր, պատասխանեց*

*ան, որ և զիտես որ կը սիրեմ՝ քեզ: Արածէ՛ իմ ոչխարներս, ըսաւ*

*Յիսուս անոր: Եւ երրորդ անգամ հարցուց. Արձո՞ն, Յովնանի՛ որդի,*

*կը սիրե՞ս զիս: Պետրոս սրտմեցաւ որ երեմ՝ անգամ հարցուց իրեն՝*

*«Կը սիրե՞ս զիս», և ըսաւ անոր. Տէ՛ր որ և ամէն ինչ զիտես, և*

*զիտես թէ կը սիրեմ՝ քեզ: Յիսուս ըսաւ անոր. Արածէ՛ իմ ոչխար-*

*ներս--Յով. ԻԱ. 15-18:*

Յարուցեալ ու յարթական Բրիստոս, խոստովանութիւն և զղջում չպահանջեց Պետրոսէ անոր ուրացումին համար: Անոր հաւատքին տկարութիւնը չջեջտեց ոչ ալ յանդիմանեց անոր հաւատքին անզօրութիւնը, այլ միայն հարցում մը ուղղեց: Վերոյիջեալ հարցումը աւելի՝ ներագդեցիկ եղաւ ու թափանցեց Պետրոսի սրտին քան ուրիշ որեւէ կշտամբանք կամ սաստ: Բրիստոսի սիրոյ գսպանակը ոտքի կանգնեցուց Պետրոսը՝ իր ուրացումէն յետոյ:

Գանատայի պետական վարչակարգը կազմուած է գանազան քաղաքական կուսակցութիւններէ: Լիպէրալ կուսակցութեան ատենապետը Պրն. Բրէթիէն կը հաւատայ որ հակառակորդ կուսակցութեան պետը Պրն Պուշարն է ու այս երկու կուսակցութեան անդամները կը հաւատան թէ երրորդ կուսակցութիւնը կը գլխաւորէ Պրն. Մանիսկը:

Օթթաուայի խորհրդարանին բոլոր անդամները կը հաւատան ու կը ճանչնան Պրն. Ժան Բրէթիէն իբր Գանատայի երկրին վարչապետը: Սակայն բոլոր անդամները, *հաւատարմ՝ և հանդերձ* Լիպէրալ կուսակցութեան կառավարող զօրութեան, իրենց հաւատարմութիւնը չեն դաւանիր Պրն. Բրէթիէնի: Ոչ միայն հակալիպէրալները չեն բաժներ իրենց հակառակորդներու գաղափարները, այլ կը ջանան չէզոքացնել անոնց ընթացքը ու քայքայել և խորտակել Լիպէրալներու քաղաքականութիւնը:

Բրիստոնեայ հաւատացեալի մը հաւատալու զօրութիւնը, ո՛չ թէ հաւատքի՛ մէջն է, այլ չհաւատալու՝ ազատութիւնը *ու նեղալով*

*հանդերձ, հաւատալուն մէջն է ... ներկայ քրիստոնեաներու հաւատքը առ Աստուած ճշմարիտ խոր ուրախութիւն և պարծանք կը պատճառէ չօր Աստուծոյ:*

**«Աւրախութիւն պիտի ըլլայ երկնքի մէջ մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ»--Ղուկ. ԺԵ. 10:**

Պատճա՞րը:

Մատանան նախ քան իր ըմբոստացումը, կը ծառայէր Արարիչ Աստուծոյ ու մատակարարն էր Մեծ Գոյին: Ան Աստուծոյ հաւատալու կարիքը չուներ, որովհետեւ *անձա՛մբ* կը ճանչնար զԱստուած: Ներկայ Դարու հաւատացեալ քրիստոնեաներ, հակառակ աշխարհի ճոխութեան, հարստութեան և հեշտութեան, առանց մարմնապէս տեսնելու և ճանչնալու իրենց Տէր Աստուծոյ, *կամառ՛ք* կերպով կը նուիրուին Աստուծոյ, կը գոհաբերեն իրենց անձերը ու կը հաւատան Անտեսանելիին ու Անմերձեանալիին: Հայր Աստուած հպարտանքով պիտի ըսէ Մատանային թէ այսուհետեւ այս սուրբերն ու նահատակները *պրծանք* են ըլլալու Իմ մատակարարներս ու խնամատարներս և ո՛չ դուն (Մատանային միացող դէտերն ալ հաշուելով): Դուն անիրաւութիւնը նախընտրեցիր ու սուտը փայփայեցար բու բաժինդ պիտի ըլլայ միայն յաւերժական կորուստն ու խաւարը:

Այնուհետեւ, Յիսուս Զրիստոս, դառնալով, Իրեն հաւատացողներուն պիտի ըսէ.

**«Եկէ՛ք, իմ չօրս օրհնածները, ժառանգեցէ՛ք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած արքայութիւնը»:**

Մատթ. ԻԵ. 36:

Մարդեղութեան փրկարար Զօրութիւն Զրիստոս երբ կ'ըսէ *«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինձի»*, Ան ըսել կ'ուզէ, *վստահեցէ՛ք ինձի, սիրեցէ՛ք զիս*, սպասեցէ՛ք իմ վերադարձիս ու եթէ *պարտաւորուիք*, նահատակուեցէ՛ք Ինձի համար, որովհետեւ ինչպէս Աստուած յարութիւն տուաւ ինձի, ես ալ յարութիւն պիտի տամ ձեր մահացած մարմիններուն: Զրիստոս չի՛ մոռնար Իր ծառաները, Զինք սիրողները, վկաներն ու մանաւանդ Իրեն համար նահատակուող դիւցազունները: Յայտնութեան գրքին վերջաւորութեան, Զրիստոսի հաւատարիմ ու նուիրեալ անձերը պիտի կոչուին անոնք:

**«Զրիստոսի հետ եղողները՝ կանչուածներ են, ընտրուածներ և հաւատարիմներ»--Յայտ. ԺԷ. 14:** Ի՞նչ պատիւ ու յարգանք:

Կեանքը պարտի դառնալ հանդիսարան մը հաւատքի, սիրոյ և ծառայութեան: Սիրո՛յ զօրութեամբ մեր հաւատքին տանք գործնական արտայայտութիւն: Գողգոթան միայն աշխարհագրական անուն

մը չէ բարձունքի մը վրայ, այլ Քրիստոսի Արեամբ ու վկայութեամբ նուիրագործուած դէպք մը ու ցոլացումը Աստուծոյ սիրոյն: Նոյնպէս ալ մարդու ինքնակատարելագործման ուղին կ'անցնի *սիրոյ* մաքրագտման բուրայէն:

Սիրել՝ *ազատագրել* է մարդը:

Սիրել՝ *սրբագործել* է չարիքը ներողամտութեամբ:

Սիրել՝ *տառապիլ* է:

Սիրել՝ *մտածնալ* է Աստուծոյ:

Հաւատացեալի մը համար զԱստուած սիրելը՝ պաշտել է սրբութեամբ ու ցնծումով, բանի որ ան սորված է ապրիլ կատարեալ *հաւատով* անմար *յոյսով* ու աննուաճ *սիրով*: Քրիստոնէութեան հիմնական տարրերն են՝

**1. հաւատք, 2. վստահութիւն և 3. նուիրում:**

Քրիստոնէութիւնը ձեւ ու մարմին, իմաստ ու նուիրում տուաւ հաւատքի պայքարամարտին: Աստուածային կոչումը արտայայտիչն է հոգեւոր պաշտօնեայի հաւատքին, յուզումներուն, նուիրումին ու ծառայութեան: Թարգմանիչները կոչումով, պատրաստութեամբ, խանդավառ հաւատքով, և նուիրմամբ հատընտիր մարդիկ էին: Հայրենիքին հողը ժողովուրդի մը *արիւնք* կը պահանջէ, իսկ աստուածային Հոգի՞ն...անոր *ամբողջակա՛ն* նուիրումը և հաւատարմութիւնը:

**Մարտ 26, 1995**

**Թորոնթօ**

## ՀԱՒԱՏԱԼ Ե՛Ւ ՏԱՌԱՊԻԼ

Ատեղծագործ և կենսատու երկու բեւեռներ կան, որոնք կը բխին նուիրումի, զոհողութեան ու տառապանքի հոգեկան ապրումէ: Այս կենդանաբար ապրումի առանձնաշնորհը կու գայ երկնառափ կոչումէ, որ կարելիութիւնը կ'ընծայէ ենթակային դառնալ աստուածանման:

Հարեանցի ակնարկով ու անձնասիրական տրամադրութեամբ որքա՞ն անիմատ և խորթ կը թուի "տառապանք"ը *զօղել* "հաւատք"ի հետ: Բնական մարդը (անձնակեդրոն ու անկարեկիր) հողաշէն ու նիւթեղէն յօրինուած էակը, նախ քան ստանալը աստուածային ջունջ, ներգորութիւն, լուսաւորութիւն ու բանականութիւն, անկարելի էր որ կարենար տեսնել տառապանքին ու ցաւին ստեղծագործ գերգորութիւնը:

Անհատներու և ազգերու, Աստուծոյ դէմ կասկածի և ըմբոստացումի գլխաւոր պատճառներէն մին, եղած է մարդկային ցաւն ու տառապանքը: Նոյնիսկ մեր ազգային հարազատ բանաստեղծներն իսկ, յաճախ հարց տուած են ըսելով. *«Մէք էր Աստուած մե՞ծ եղեռնի պատճառն»*:

Հարցումը տեղին է և արդար: Որովհետեւ *մարդկայի՞ն* մտածումն ու խորհրդածութիւնը կարելի չէ զսպել կամ սանձահարել: Լեզուն կարելի է հնազանդեցնել, սակայն *միտքը* ո՛չ: Ինչո՞ւ, որովհետեւ մարդկային միտքը՝ աստուածային այն կայծն է, որ մարդ էակը կը զատորոշէ ուրիշ արարածներէն: Միտքն ու մտածումը, մարդու շնորհուած գրաւականն է, որ ինք կը պատկանի Արարիչ Աստուծոյ: Մարդկային միտքը անկապտելի է: *Աստուած մեր միտքը չսանձահարեք, այլ կը լուսաւորէ՛*: Մեզի թողած է բնորոշելը ու կշռադատելը:

Յիսուս Բրիստոսի բացայայտած հաւատքի ու տառապանքի նորայայտ իրադարձութիւնը, քրիստոնէական հարուստ իմաստին մէջ, ըմբռնելու համար, մարդ կարիքը ունի հոգեկան յափշտակութեան: Ինչո՞ւ, որովհետեւ հեթանոսական դարերու անիմանալին և անըմբռնելին՝ Բրիստոսի սրբաբար **Խաչելութեա՛ն** լոյսին տակ ըմբռնելի կը դառնայ:

Մարդկային հոգին այնքա՞ն բարդ է ու բազմակողմանի անոր ըմբռնումներու, ապրումներու ձեւերն ու կերպերը, որ անոնց իւրաքանչիւրը իր արտայայտութեան իւրայատուկ լեզուն և առանձնայատկութիւնները ունի: Հետեւաբար արդի դարու հաւատացեալ մը Բրիստոսի՝ ճշմարտութեան լուսամուտէն դիտելու է ըմբռնելու

համար աստուածային շնորհը և Յիսուս Զրիստոսի յաւերժաբոյր խօսքերը, երբ Ան խօսեցաւ տառապանքի մահաբազուխը ու քիւրեղացուցիչ հաւատքի մասին:

***Յիսուս սկսաւ յատկօրէն յայտնել աշակերտներուն,  
թէ զէտք է որ Ինք երուսաղէմ երթայ, շատ չարչարանքներ կրէ քահանայապետներէն, դպիրներէն,  
ժողովուրդի ծերերէն. և սպաննուի ... »:***

Հաւատքի ժայռահիմ` Յիսուս Զրիստոսի խօսքերուն մէջ հերոսանալու` հեթանոս պայքարամարտի գաղափարը չկայ, այլ կա՛յ Իր առաքելութեան *նուիրումն*, ու հաւատարմութիւնը, որոնք ո՛չ պարագայական են ու ո՛չ ալ ջահադիտական: Երկնային Պատգամաբեր Մեսիան կը գոհաբերէ Իր Անձը մարդկութեան համար ու Իր Կամքը կը նուիրէ Հօր Աստուծոյ հանձարեղ Կամեցողութեան: Երկնաբաշխ Միրոյ արիութիւնը իր լրումին հասցնելու համար, անհուն Զգաստութիւն (Յիսուս) կ'ընդառաջէ և կը յօժարի տառապիլ, անարգուիլ ու անարդարօրէն մահուան դատապարտուիլ:

Անձնամատոյց Յիսուս երբ կ'ըսէ. **«Ես եմ Ճամբան»:** Ան ըսել չ'ուզեր թէ Իր ճամբան սալայատակուած է ոսկիով ու լուսազարդուած արդի ելեկտրական լոյսերով, այլ Իրեն հաւատա՛լ ու Իրեն հետեւիլ իր մէջ կը պարփակէ տառապանք, ցաւ ու գոհողութիւն: Ոչ թէ սուրով ու զէնքով եղած հերոսութիւն, այլ *անէ նազոհութեամբ* ու անձնուրացութեամբ կատարուած հերոսութիւն: Զրիստոսի ճամբան այն վերելքն է, որ մարդ էակը կը բարձրացնէ անասնութենէ դէպի աստուածանամանութիւն, նիւթեղէնէ դէպի հոգեղէն և ժամանակաւորէն դէպի յաւերժութիւն:

Աստուած անհննելի Իսկութիւնն է ու անհասանելի մարդկային պարզ հետաքրքրութեամբ, որովհետեւ Ան սուրբ է ու երկնային անդիմադրելի Զօրութիւն: Ան մարդկայինը` գերմարդկայինի կը վերածէ, կաւը` լոյսի, տկարութիւնը` զօրութեան: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, քան թէ բացատրել, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, քան թէ կրնանք երեւակայել զԻնք: Մարդ` Աստուծոյ լծակցութեամբ միայն կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ:

Վերոյիջեալ անըմբռնելի ճամբան հասկնալն ու գիտնալը, հոգեկան և փորձառական վարժութիւն կը պահանջէ: Ողիմպիականի մրցորդ մարզիկներ հանգստաւէտ ու դիւրակեաց ճամբով չէ՛ որ կը հերոսանան և կը իլեն դափնեպատակներ, այլ անդու և յարատեւ աշխատանքով, երբեմն վիրաւորուելով իսկ, և ֆիզիքական

ցաւեր քաջելով աննահանջօրէն կ'արջաւեն դէպի իրենց նպատակակէտը:

Դիտենք բնական մարդը, աշակերտող հաւատացեալ մը, սակայն *յաւակնուս* հաւատացեալ մը, որ չէ մերկացած իր հին նախապաշարումներէն՝ հեթանոս մտածումներէ: Այս աշակերտը կը ներկայանայ մեզի Աետարաններուն մէջ որպէս Պետրոս՝ մէկը տասներկու ընտրեալներէն: Յիշողութեան արժանի դրուագը, Պետրոս առաքեալի մէկ տխուր և սակայն փոքր երեսակներէն մին է: Ան կը ներկայացնէ ընդհանուր հաւատացեալները: Ան կ'աճապարէ իր խօսակցութեան մէջ, և իբր թէ կ'ուզէ խրատել իր Յիսուս Վարդապետը, և կը սկսի վիճիլ Անոր հետ ըսելով.

**«Ըստ լիցի բեզ, Տէ՛ր, այդ բանը բեզի չի պատահիր»:**

Յիսուս նախապէս սկսած էր յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէ՛տք է որ Ինք երուսաղէմ երթայ, ջատ չարչարաններ կրէ քահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Երբ Պետրոս կ'ընդդիմանայ Յիսուսի, մեր Տէրը դառնալով Պետրոսին կ'ըսէ.

**«Ետի՛ս գնա, Սատանա՛, դու ն գայթակղութիւն ես ինձի համար, որովհետեւ բու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ Մարդոց»**--Մատթ. ԺԶ. 22-23:

Յիսուս Զրիստոսի ամենամահանջելի խօսքերէն մին հետեւեալն է. **«Ընու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն»:**

Ի՞նչ խորհրդապաշտական (միստիկ) արտայայտութիւն: Ի՞նչ հսկայ տարբերութիւն կայ *բնական* մարդու և Մարդեղեալ Յիսուսի մտածումներուն միջեւ: Ահաւասիկ ջողջողուն տեսլական մը, գեղազմալ մտատիպար մը և հմայագեղ ճանապարհ մը, որ ուղղութիւն կու տայ *բնական* մարդուն ստանալու տեսիլ՝ մը, որ աստուածային է և ստեղծագործ:

Այսպիսի ելարան մըն է, որ մագլցեցան այն սուրբերը, որոնք հայ մատենագրութեան մէջ կը կոչուին Նարեկացիներ, Ծնորհալիներ Մեսրոպներ, Լուսաւորիչներ, Սանդուխտներ և Ծուշան Վարդենիներ:

Վերոյիջեալ սուրբերուն նախա-աշակերտը եղած էր Պօղոս առաքեալ, որ նախքան իր հրաշունչ քարոզութիւնները ու վարակիչ սիրոյ ջատրուան նամակագրութիւնները, զինք մեկուսացուց աջխարհէ ու իր բարեկամներէն: Ան դարձաւ անապատականը Արաբիոյ կիզիչ անապատներուն մէջ ու քանի մը տարիներ հսկումով ու աղօթելով ստացաւ քրիստոնէական վերածնունդ, ո՛չ

թէ *բերանացի*, այլ *կենցաղախարական*։ Ահա թէ ի՛նչ կը մտածէ Պօղոս առաքեալ երկու տարի Արաքիոյ Բարանձաւներուն մէջ խոկալէ և Յիսուսի հետ դէմ յանդիման գրոյցներ ունենալէ յետոյ։

**«Վասնզի ձեզի տրուեցաւ (շնորհուեցաւ) Բրիստոսի համար՝ ոչ թէ միայն անոր հաւատալ, հապա Անոր համար չարչարուիլ ալ»**--Փիլ. Ա.29:

Առաքեալին աստուածաշնչեալ բառերը նորանշան լուսամուտ մը, երկնագեղ հայեացք մը և Յիսուսահմայ մտածում մըն է, որ կը գերադասէ մարդկային, եասսիրութիւնը և անձնապաշտութիւնը։ Սուրբ նպատակի և սիրոյ համար եղած ցաւն ու տառապանքը *ստեղծագործութիւն* է և արարչագործութիւն մը անհատի հոգիէն ներս։

Ս. Գրիգոր Պահլաւունիի 13 տարիներու տառապանքն էր Խոր Վիրապին մէջ, որ դարձի բերաւ Տրդատ Թագաւորը, հայ պալատականները և արարատեան ժողովուրդը կանգնեցուց լուսաւորութեան ճանապարհին վրայ։ Սուրբ կոյսերու և վանականներու աննահանջ մարտիրոսութիւնն էր, որ մարդկային *բնական* մտածումի դունդը խորտակեց ու ցոյց տուաւ լուսապայծառ մտածումը Յիսուս Բրիստոսի։

Գողգոթայի անարկու որոտումներու և կայծակնաբոց փայլատակումներու լոյսին ու փոթորիկներուն տակ լսուեցաւ Հօր Աստուծոյ սիրոյ կանչը Իր Միածնի տառապակոց ջրթներէն ու խաչին նախատինքն ու անէծքը փոխակերպեց յաւերժաբոյր փրկութեան, երբ յոյնն ու հրեան, հեթանոսն ու հռոմէացին լսեցին։

**«Հա՛յր, ներէ՛ ասոնց որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»**--Լուկ. ԻԳ.34:

Ահաւասիկ հաւատքի ճանապարհը, գուգորդուած տառապանքի, ցաւի և նուիրումի հետ, որ կը տանի հաշտութեան, փրկութեան և յախտենական կեանքի։

Մարդկութեան ներկայ գոյութիւնը արգասիքն է *աստուածայի՛ն* տառապանքին ու ցաւին։ Հետեւաբար մարդկային անհատական և համազգային տառապանքն ու ցաւը արժանիք մը պիտի դառնայ անհատին, ընտանիքին և ազգային յաւերժութեան, երբ այդ տառապանքը *լծակցութիւն* մը *մասնակցութիւն* մը դառնայ Արարիչ Աստուծոյ սուրբ և **Ժննդագործող տառապանքին**։

**Սեպտեմբեր 21, 1987--Թորոնթօ**

## ԻՆՉՈ՞Ւ ԿԱՒԱՏԱԼ ՅԻՍՈՒՍԻ

Աստուած՝ Ինֆզինֆ յայտնած է համայն տիեզերքի տարածութեան մէջ: Այնպէս ինչպէս Աստուած Ինֆնագոյ էութիւն և Գոյացութիւն է, նոյնպէս ալ Ինֆնայայտնութիւն է Ան: Աստուածային ինֆնայայտնութիւնը կարելի է տեսնել այգալոյսող արջալոյսի ջողերուն և լեռներու ամպածրար բարձրագագաթներուն վրայ: Հովերու սուլոցին և մանաւանդ Բաղքանուագ զեփիւռի ջջնջիւնին մէջ: Նոյնիսկ կարելի է տեսնել զԱստուած տարրերային հիւլէի մը մէջ որ մանրակերտ տիեզերք մըն է ինֆնին: Տեսողութիւնը սակայն միայն ֆիզիքական աչքով չ'իրագործուիր, այլ՝ աստուածային ջնորհ մըն է ու երկնաբաշխ պարգեւ մը: Առաֆ: ԺԷ. 27-28

Մարդ՝ Աստուծոյ արնթեր այնֆա՞ն փոքր և աննշան է ճանչնալու Ջայն, որ կը կարօտի միջնորդի և դաստիարակի մը: Մարդկութիւնը՝ իր բազմադարեան պատմագրութեան ընթացքին ծնունդ տուած է բազմաթիւ մարգարէներու, տեսանողներու և վարդապետներու: Անոնք ջանացած են բացատրել զԱստուած իրե՛նց ըմբռնողական դիտանկիւնէն:

1. Աբրահամ նահապետ՝ իր աստուածային բոլոր ճանաչողութեամբ քիչ մնաց մարդագոհ պիտի ընէր իր Իսահակ որդին հաճեցընելու կամ սիրաջահելու համար զԱստուած, կարծես Աստուած ըլլար Ջեւս կամ Աստարովդ մը:

2. Օրէնսդիր և կրօնակառոյց Մովսէս մարգարէն, որ Աստուծոյ հետ խօսած ըլլալ կը կարծուի, ներկայացուցած է Ջայն որպէս *նախանձոտ և վրէժխնդիր* նման յոյն Ապոլոնի:

3. Դաւիթ՝ մարգարէ և թագաւոր, թէեւ քերթողած է աննման Մաղմուսներ և յօրինած երկնաւազ բանաստեղծութիւններ, սակայն ջարունակած է ըլլալ արինահեղ և դիակալ որովհետեւ Սամուէլ մարգարէն դաստիարակած էր Դաւիթ թագաւորը:

4. Հին Կտակարանի սրբակենցաղ, սակայն ազգայնամոլ մարգարէներ, նոյնիսկ իրենց տեսանողի գերբնական զօրութեամբ, չեն կրցած ներթափանցել աստուածային յաւերժութեան որ պիտի ջնորհէր յաւիտենական կեանք մարդ-արարածներուն:

5. Յիսուսի աջակերտող և ԱստուածՈրդին մարմնապէս ճանչցող Յովհաննէս և Յակոբոս աջակերտները, ցուցաբերելու համար իրենց հաւատարմութիւնն ու սէրը հանդէպ Յիսուսի, կ'ուզեն կրակ իջեցնել սամարացիներու վրայ և մոխրացնել զանոնք:

Մարդասէր Աստուած անհո՛ւնօրէն սիրած էր աշխարհը և առա՛ված Իր Միածինը որպէս կենդանի՝ Յայտնաբարբառ Իր սիրոյն ու ողորմութեան: Անդին՝ երկու Յիսուսի աշակերտ եղբայրներ, անգէտօրէն կը ջանան փաստել եղիա մարգարէին ազգայնամոլ Աստուածը, փոխանակ յայտնաբերելու Աստուծոյ սէրը որ առարկայականօրէն ներկայ է իրենց մէջ, որպէս՝ Նազովրեցի Վարդապետ:

Աստուած՝ թէեւ Ինքնայայտ է ու Իր ներկայութիւնը լիաբովսօրէն սփռուած համայն տիեզերքի տարածութեան մէջ, սակայն մարդ՝ լրիւ ճանչնալու և ըմբռնելու համար աստուածայայտնութիւնը կը կարօտի լուսաճանդերձ Գալիլեացիի բարութեան և Մարմնացեալի Անհատականութեան: Արովհետեւ Յիսուս՝ կեանքի բոլոր ոլորտները թափանցող *զարպէտայ*: մը չէ միայն, այլ կենդանարա՛ր **Ապրում** մը: Գաղափար մը առանց ապրումի կ՛մախ՛ է: Յիսուս Իր անձի՛ն և ապրումի՛ն միջոցաւ ցոյց տուաւ աստուածայայտնութեան դիմագիծը ու դարձաւ հարագատ և տեսանելի թարգմանը աներձեռնալի և անհասանելի Սէ՛ր Աստուծոյ:

Սովորաբար՝ իմաստասէրներ, բանաստեղծներ և մարգարէներ, իրենց յորդորներով, ճառերով և գաղափարաբանութեամբ պատկերացուցած և նկարագրած են զԱստուած ու Բարին, իտէլականն ու տեսլականը:

Յիսուս՝ Իր **ապրումո՛ւ** և ազատատենչ ճախրանքով կը նկարէ և կ՛առարկայացնէ Իր պատմուածքները: Իր ապրումէն հորիզո՛ն մը կը բանայ մեր սրտերուն մէջ և Իր կարեկից խօսքերովը, Իր Աջին հպումովը և Իր նայուածքին ազդու սեւեռումով մեզ Իրեն կ՛ենթարկէ: Խաչի՛ ճամբով ու անոր վրայ բազկատարած՝ Ան կամրջեց ժամանակաւորը Յախտեանկանին հետ և կերտեց պատմութեան մեծագոյն անկիւնադարձը:

Նախքան երեւումը լուսաճաճանչ Մարդեղեալին, մարդկութիւնը կը հեծէր և կը հիւծէր որպէս խղճահար մեղաւոր բմահաճ աստուածներու պատիժներու և պարտադրուած զրկանքներու ներքեւ:

Հրէաստանի Մովսիսական հաւատացեալները՝ վախի սանձով զսպուած, ոչ թէ՛ **ներում** կը ստանային իրենց Աստուծմէն, այլ՝ միայն **Բաւութիւն** հաճեցնելով զԱստուած զոհերու արիւնով: Մինչ Պօղոս Առաքեալ՝ իր առաքելաշունչ պատգամներով կը վկայէր Աթէնացի իմաստասէրներուն թէ Աստուած *«մարդոց ձեռնով չի պաշտուիր՝ բանի մը կարօտի պէս. Բանզի ինք կու տայ ամէնուն կեանք ու ջուռն: և ամէն բան»*-Առաք. ԺԷ. 25:

Յոյսի և իրախոյսի ժայռահիմ Յիսուս, կը դառնայ փարիսեցիներուն և Մովսէսի աշակերտ Օրինականներուն և կ՛ըսէ,

*«Մանր և դժուարակիր բերներ կը կապեն ու մարդոց ու սերուն*

*վրայ կը դնեն և իրենց մատով անգամ չեն ուզեր ջարժել:*

--Մատթ.ԻԳ.4: Յիսուս կը ջանայ փարատել նախապաշարումի խաւարը որ բարեպաշտ և հոգեւոր կոչուածներ կանխած են մեղաւորին և Աստուծոյ միջեւ:

Յիսուս, մեղաւորն ու յանցաւորը դատապարտելէ առաջ, կ'ողորմի անոնց, կը սիրէ զանոնք ու կը կարեկցի անոնց արկածեալ հոգիին ու տապալումին համար: Վերոյիջեալ ակնարկութիւնը, առարկայականօրէն և սրտաշարժօրէն կը պատկերացնէ Յիսուս որպէս հարազատ Թարգմանն Աստուծոյ:

Հիւրնկալ Փարիսեցիս (իրենք զիրենք Աստուծոյ դատաւորներ կարգող բանգէտներ) և մեղաւոր հանրակիներ որ պաղատագին ու ծնրադիր արտասուաթոր կը լուայ և կը համբուրէ այն Ուրբերը որոնք աւետիս բերած են աստուածային սիրոյ, ողորմութեան և ներումի, կը պատկերասփռեն աստուածճանաչումի նոր հորիզոններ:

Մարդեղեալին սուրբ ապրումի՛ն մէջ կը տեսնենք Աստուծոյ Հայրութիւնը, Անոր սիրոյ անսպառ ակնադբիւրը և հոգատարութիւնը: Բոլոր կրօններն ու հաւատալիքները կը ներկայացնեն զԱստուած որպէս Արարիչ և հզօրագոյն Ուժ, սակայն անմերձեանալի, անտարբեր և նոյնիսկ բմահաճ... հանդէպ մարդկութեան:

Յիսուսի՛ և Անոր անձնուէր գոհողութեա՛ն կը պարտի մարդկութիւնը իր ճանաչումն ու մօտեցումը սիրող և բարեգութ Աստուծոյ: Յիսուսի ճարագայթող և յաւերժաբոյր ճշմարտութիւններու՛ն կը պարտի պոռնկացող կիներ իր կեանքն ու ողջութիւնը երբ Հին Կտակարանի աւանդապաշտ Օրինականներ, նախքան Բարկոծելով սպաննելու զինք, հաւանութիւնն ու արտօնութիւնը կը պահանջեն Նազովրեցի Մարգարէին:

Ի՞նչ կը կարծե՞ք, որ Յիսուսի սեւեռումը տեսած ըլլայ այդ հանրակնոջ հոգւոյն մէջ: Յովութի՛ւն և լկտիութի՛ւն: Ո՛չ: Այդ պոռնիկ կարծեցեալ իլեակին մէջ, Յիսուս տեսաւ հառաչանք մաքրամաքուր պարմանուհիի մը, որ գոհը դարձած էր բռնաբարող և գալլաբարոյ կեղծ բարեպաշտներու:

Աստուածային վախի, սարսափի և պատիժի վարդապետութեան փոխարէն, Յիսուս յայտնաբերեց աստուածային անյիջաչարութիւնը և թողութիւնը համայն մարդկութեան: Ոչ թէ որպէս մեղանջելու թոյլտուութիւն և ազատութիւն, այլ արդարակշիռ և անաչառ հայեացք և հանգամանք հանդէպ մարդ արարածներու:

Աստուածային սիրոյ ներազդեցութիւնը արջալոյսեց համայն մարդկութեան Յիսուս Զրիստոսի միջոցաւ: Յիսուս յայտնաբերեց մարդկութեան Հա՛յր Աստուծոյ Սիրո՛յ Ճանապարհը, Ներումի՛ ճշմարտութիւնը և Ողորմածութեան Կեանքը:

Մինչեւ երեւումը երկնաբարբառ Յիսուսի, մարդկութիւնը  
հաւատացած էր **սկզբնական մեղքի**, մարմնի անարգ և անարժան  
հանգամանքին: Նոյնիսկ կարգ մը հաւատալիքներու մէջ սերնդա-  
գործող սեռայնութիւնն իսկ նուաստացուցիչ և անվայել կը  
սեպուէր, հրեայ էսսէյացիներու աղանդին մօտ:

Մարմնականը նկատուած էր անարգ և մեղանշական: Առա-  
քելաշունչ Պօղոս երբ մարմինը ստորադաս կը սեպէ հոգեկանի  
նկատմամբ, կ'ըսէ.

*«Մաքինիս մէջ բարի բան չի բնակիր»*--Հոով. Է. 18:

*«Մի՛ գիտ պիտի ազատէ այս մահացու մարմինէն»*--Հոով. Է. 21:

*«Վասնզի մարմինով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճելի  
ըլլալ»*--Հոով. Ը. 8: Ան ըսել կ'ուզէ, երբ մարմինը չար հոգիներու  
ենթակա՛յ **դառնայ**, երբ մարմինը սպասաւորէ՝ **չա՛ր** մղումներու,  
այն ժամանակ մարմինը իր աստուածային դիրքադրումէն և  
հաճելիութենէն կը զրկուի և կը դառնայ մահացու և մահկանացու:

Յիսուս երբեք անարգական չսեպեց մարմինը: Ան բացատրեց  
մարմնին և հոգիին փոխ յարաբերութիւնը ըսելով.

*«Լսեցէ՛ք և իմացե՛ք. բերնէն մտածը չէ որ կը պղծէ մարդը, այլ  
ինչ որ բերնէն կ'ելլէ անիկա կը պղծէ մարդը»*--Մատթ. ԺԵ. 11:

Յետոյ Յիսուս կը բացատրէ Իր վճռական խօսքերը Իր  
աջակերտներուն ըսելով.

*«Ինչ որ կը մտնէ բերանը՝ փոքր կ'ելլի՞նք և դուրս կ'ելլէ: Իսկ  
ինչ որ բերնէն կ'ելլէ, սրտէն է որ կու գայ և առ է որ կը պղծէ  
մարդը: Տրտվեա՞նք սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ, սպանու-  
թիւ ներք, ջնութիւ ներք, պոռնկութիւ ներք, գողութիւ ներք, սուտ  
վկայութիւ ներք, հայրնոյութիւ ներք. աստե՛ք են որ կը պղծեն մարդը,  
բայց անպայ ձեռե՛րով ուտելը չի պղծեր մարդը»*-Մատթ. ԺԵ. 17-18:

*«Սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ»* կը նշանակէ՝ չար  
ոգիներու մղումները որոնք կը ջանան իրենց ենթարկել մարմնի  
գործունէութիւնը: Երբեք մոռնալու չէ որ Աստուած Ի՛նք ստեղծած  
է մեր մարմինները իրենց *բուրդ* անդամներով և մեր բոլոր  
անդամներուն օրինաւոր գործածութիւնը **բարի՛** սեպուելու են:

Երկրորդ, մոռնալու չէ որ մարմինը Մուրք Հոգւոյն տաճարն է:  
Երրորդ. Յիսուս ըսաւ.

*«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չուտե՛ք Մարդու  
Տրդիին մարմինը և չխմե՛ք անոր արիւ նը՝ կեանք չէ՛ք ու նենայր ձեք  
մէջ: Ո՛վ որ ուտէ իմ մարմինս և ըմպէ իմ արիւ նս՝ յաիտենական  
կեանք պիտի ու նենայր»*--Յով. Զ. 54-55:

Յիսուս որքա՞ն կարեւորութիւն կու տայ մարմնի: Եկեղեցականներու և հաւատացեալ մտաւորականներու ուժացումը մարմնի սրբութեան և աստուածայնութեան, ջփոթեցուցած է Քրիստոնէական ըմբռնումը մարմնի հանդէպ երկար դարեր: Երկրորդ դարու կարգ մը Քրիստոնէայ աղանդներ, այնպէս հաւատացին և ջանացին հաւատացնել, թէ իրենք ազատ են մարմինով ապրիլ և գործել ամէն տեսակ ցոփութիւն և անկարգութիւն որքան ժամանակ որ **հոգեպէս** սուրբ են...:

15-րդ դարը՝ Եւրոպայի Վերազարթնումը, հարիւր տարիներու շրջան մը բոլորեց որու ընթացքին եկեղեցականներն ու որոնող միտքերը ճանչցան մարմնի գեղեցկութիւնն ու անոր աստուածային սքանչելիութիւնը:

15-րդ դարու վերազարթնումը իր հիմնական հանգամանքին մէջ **մշակութային** ջարժում մըն էր որ յայտնաբերեց փառքը դասական հնութիւններու որոնց կեդրոնական գեղեցկագիտութիւնը մարդկային մարմինն էր:

Տասնհինգ երկար դարեր եկեղեցական բացարձակ իշխանութիւնը տիրապետած էր մարդկային խորհողութեան, լեզուաբանութեան, մատենագրութեան և կրօնի: Եւրոպական մտածելակերպը իջիած և դիտած էր մարդը որպէս թշուառ արարած և ամօթալի արտադրութիւնը **սկզբնական մեղքին**: Վերոյիջեալ եկեղեցական հայեացքը թէեւ Քրիստոնէական չէ՛, սակայն խորապէս արմատացած և նոյնացուած էր Յիսուսի հաւատքի հետ: 15-րդ դարու իմաստասիրութիւնը բնաջնջեց մարմնի ամօթալի և մեղաւոր դիմագիծը և մարդ արարածը նստեցուց բարձրագոյն պատուանդանին վրայ ընելով գայն առանցքը տիեզերքի և պարգեւելով անոր անհուն և ամենազօր կարողութիւն:

Բանասէր մտաւորականներ նման Փիեռ Տէլլա Միրանտոլայի, Էրազմոսի, Մոնթայնի և ջատ մը ուրիշներու, որպէս ջահակիրները Վերազարդումի, ջանացին լուսաւորել մարդկային մտածումի հորիզոնը և մարդը ազատագրել առանց ծայրայեղ և աստուածընդդէմ նպատակներու:

Թէեւ մարդկայնական (humanist) տեսաբանութիւնը ազատագրեց մարդ արարածը իր մշակութային գերեվարութենէն, սակայն աստուածացնելով մարդ արարածը, ան ուրացած եղաւ մարդը ստեղծող Արարիչը:

Ներկայ՝ 20-րդ դարու մարդը գերին դարձաւ և անգէտ ստրուկը չար մղումներու: Ուրանալով զԱստուած ան կը ջանայ աստուածացնել ինքզինք: Մարդկութիւնը ազատագրելով մարմնի սիսալ ճանաչումէ, մարդ արջաւեց տարբեր ծայրայեղութեան:

Ներկայ ըմբռնողական տարածութեան մէջ ոչ թէ մարմինը ամօթալի կը նկատուի, այլ կ'ուրանայ մարմնի նուիրականութիւնը: Մարմնական սրբութիւնը և անոր ամուսնական խորհուրդը դարձած է միայն հեշտանքի և մարմնապաշտութեան միջոց մը:

15-րդ դարու հաւատացեալ իմաստասէրներ և հոգեւոր դարբիններ չնախատեսեցին թէ իրենց յաջորդող անհաւատ և մարդապաշտ հոգեբաններ ոչ թէ պիտի ազատագրէին մարդկութիւնը, այլ՝ զայն սանձարձակելով պիտի այլասերէին զայն: Մարդապաշտ իմաստասէրներ ոչ թէ ազատագրեցին մարդը իր նուաստ և ամօթալի հանգամանքէն, այլ՝ ուրանալով մարդ-արարածին նուիրականութիւնն ու անոր աստուածակերպարութիւնը, զայն դարձուցին անասունի, արժեքագրելով և թոյլատրելով որ գործածեն զայն իրենց անձնասիրական, ազահութեան և վայրագութեան համար:

Հաւատքի ուրացումն ու աստուածընդդէմ ըմբոստացումը՝ մարդը չ'ազատագրեր, այլ զայն կը դարձնէ անասուններէ աւելի վայրագ ու դիւահար: Մարդկութիւնը ազատագրելու միակ յոյսը և հեռանկարը կը գտնուի հաւատքի՝ և առ Աստուած հոգեկան խոյանքի մէջ: Աստուածային երկնաբարբառ արձագանգը տակաւին լսելի է.

***«Եկե՛ք ինձի բոլոր հոգնածներ ու բռնաւորուածներ և ես պիտի հանգստացնեմ ձեզ»*** --Յիսուս:

**--Մատթ. ԺԱ. 28**

**Յուլիս 14, 1990**

**Թորոնթօ**

# ԻՆՉՈՐԻ ՀԱՒԱ-ՃՂԼ ԱՍՏՈՒԾՈՅ

--Ա Կորնթ. ԺԳ. 1-4, Եբր. ԺԱ. 1

**Ի՞նչ է հաւա-տալը:** Հաւատալը ա՛յն գորութիւնն է որ մարդ իր աստուածասուր և հրաշագօր կարողութիւնը *գործօ՛ն կը դարձնէ՝ կ'աշխատցնէ:* Մարդու մը հաւատքը ինչպէ՞ս գործօն կը դառնայ: Ինչո՞ւ Յիսուս Բրիստոս հաւա-տալ՝ կը պահանջէ Իրեն աշակերտողներէն:

1. Հաւատալ կը նշանակէ **վստահիլ:** Այն սիրտը, որ կը հաւատայ, կը յուսայ, կը սիրէ, կը պայքարի և իր կեանքի ուղղութիւնը կը վստահի Յիսուս Բրիստոսի, կը դառնայ *գործօ՛ն* և անպարտելի:

2. Յիսուսի հարցումը՝ *«Հաւատք ունի՞ն»* չէր, այլ *«կը հաւատա՞ս»*:

3. Ամէն ո՞ր հաւատք ունի, բայց չի գործածեր, նման այն հարուստներուն, որոնք ունին դրամ սակայն ո՛չ կը ծախսեն այդ դրամը, ու ո՛չ ալ նուիրատուութիւն կ'ընեն սոյն գանձէն:

4. Բրիստոնէութեան հիմնական տարրերն են՝ հաւա-տալ, վստահիլ և նուիր-ուիլ Աստուծոյ: Նման փոքրիկի մը որ կը վախնայ հօրը գիրկը ցատկելէ:

**3. Ինչպէ՞ս կարելի է հաւատք մը, հաւա-տալ ո՛ւ փոխել:**

ա. Տօքթ. և Մտմ. Զիւրիները Հաւատք ունէին, որ այս ինչ բաղադրական փորձառութեամբ կրցան ուրանիւմ տարրը հնարել: Անոնք իրենց հաւատքը անձնավստահութեան վերածեցին: Ծախեցին իրենց բոլոր ունեցուածքը, և տրամադրեցին իրենց փորձագիտութեան:

բ. Իրենց հաւատքը դարձուցին վստահութիւն և գործօն մասնակցութիւն: Անոնք գտան իրենց փնտածը:

գ. Մարդ արարած *հաւատք ո՛վ կը ծնի:* Ոմանք կը գործածեն այս գորութիւնը, իսկ ոմանք ալ չեն գործածեր:

դ. Մարդ կը հաւատայ թէ, զինք կերակրող և հոգացող անձերը, *ի՞ր ծնողքն են:*

**4. Յիսուս այս հաւա-տալ ո՛ւ վստահութիւնն է որ կ'ուզէ տեսնել մեր իւրաքանչիւրին հոգւոյն մէջ:**

ա. Յոյց տալու ենք Աստուծոյ, որ մեզի տուած հաւատքը *դրակա՛ն դարձուցած ենք,* գործօն գորութեան վերածած ենք:

**5. Հաւատալ Տէր Յիսուս Բրիստոսի կը նշանակէ--** Հաւատալ, վստահիլ, սիրել, աշակերտիլ, և *կտաարե՛լ* Անոր պատուիրանները:

1. Մատանաներն ալ կը հաւատան Աստուծոյ բայց չեն հնազանդիր:

3. Հայեր կը հաւատան թուրքերու գոյութեան բայց չեն սիրեր:

4. Յիսուս հարցուց Պետրոսի. *«Ձիս կը սիրե՞ս, կը վստահի՞ս»:*

**Մայիս 6, 1999, Թորոնթօ**